**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 1-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.12.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 353 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի 27.12.2021թվականի <<Արենի համայնքում Ամանորյա միջոցառումներին ընդառաջ ՀՀ սահմանների և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված և վիրավորում ստացած զինծառայողների ընտանիքի անդամներին և/կամ հարազատներին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին>> թիվ 353 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1. Որոշման տեքստի աղյուսակի 7-րդ տողի մեջ <<11>> թիվը փոխարինել <<7>> թվով, <<0>> թիվը փոխարինել <<3>> թվով, <<220 000>> թիվը փոխարինել <<170 000>> թվով:

2. Ընդամենը տողի մեջ <<370 000>> թիվը փոխարինել <<400 000>> թվով:

3. Որոշման հավելված 1-ի մեջ դադարեցնել աղյուսակի 32-րդ, 33-րդ, 34-րդ և 37-րդ կետերի գործողությունը:

4. Որոշման հավելված 2-ի մեջ.

ա) ավելացնել նոր 38-րդ, 39-րդ և 40-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Խաչիկ | Արթուր Աղաբաբյան | 10 000 |
| 39 | Խաչիկ | Արշալույս Բադալյան | 10000 |
| 40 | Խաչիկ | Վահե Հովհաննիսյան | 10 000 |

բ) Ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ.

| | | | |
|---|---|---|---|
| ընդամենը | 49x20 000=980 000 | 40x10 000=400 000 | 1 380 000 |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 2-Ա

18.12.2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 2,54957 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արման Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 18 դեկտեմբերի 2018 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի և Արման Պետրոսյանի միջև կնքված Արենի համայնքի Ելփին բնակավայրում 2,54957 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը /վկայական՝ 21122018-10-0014/:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 3-Ա

ԱՐԱՄ ԿԱՄՈՅԻ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03 ՀԱ ԵՎ 0.01853 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ 0.04853 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արամ Կամոյի Տեր-Մկրտչյանի սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.03 հա (ծածկագիրը՝ 10-012-0030-0008, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և 0.01853 հա (ծածկագիրը՝ 10-012-0030-0010, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասերի միավորման արդյունքում ստեղծված 0.04853 հա (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասին տալ հետևյալ հասցեն Արենի համայնք, Արփի բնակավայր, Երևանյան խճուղի 21/3:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 4-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՅՈՒԴՎԻԳ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ 0.14 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆ ԳԵՎՈՐԳ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 94-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջով, հիմք ընդունելով Լյուդվիգ Բաբայանի և Գևորգ Թովմասյանի դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լյուդվիգ Բաբայանի կողմից 20.05.2010 թ.-ին վարձակալած 0.14 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խաղողի այգին (վկայական՝ N 0087269) ենթավարձակալությամբ հատկացնել Ելփին բնակավայրի բնակիչ Գևորգ Թովմասյանին:
2. Ենթավարձակալության ավարտը՝ 20.05.2035թ.
3. Տարեկան վարձավճարը սահմանել 5000 ՀՀ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 5-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.12.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 356 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 29.12.2021 թվականի <<20.05.2010 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի նախկին Ելփինի գյուղապետարանի և քաղաքացի Լյուդվիգ Բաբայանի միջև կնքված ՀՀ Վայոց ձոր մարզի Ելփին բնակավայրում 0.14 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին>> թիվ 356 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 6-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱԶԳԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.0187 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ճանաչել Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վազգեն Սեյրանի Հարությունյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.0187 հա մակերեսով /ծածկագիրը՝ 10-012-0048-0010, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ գ. Արփի 5-րդ փողոց, 2 փկղ. թիվ 7/ բնակավայրերի նշանակության հողամասի սեփականության իրավունքը:

2. Վազգեն Հարությունյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 0.0187հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**